ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Մերրի Շահբազյան
Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս

Սույն գիտական հոդվածում հեղինակը իրավահամեմատական վերլուծության է ենթարկել քաղաքացիության ինստիտուտի հասկացությունը և զարգացման միտումները: Հեղինակը հենվել է ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլ նաև արտասահմանյան երկրների օրենսդրության համապատասխան դրույթների վրա: Հոդվածում բացահայտվել են նաև քաղաքացիության ձեռքբերման սկզբունքները և երկքաղաքացիության (բազմաքաղաքացիության) վերաբերյալ դրույթների բովանդակությունը:

Հիմնաբառեր. քաղաքացիություն, իրավահամեմատական, հողի սկզբունք, արյան սկզբունք, նատուրալիզացիա, քաղաքացիության ձեռքբերում, երկքաղաքացիություն:

Մարդը՝ որպես սոցիալական էակ, յուրաքանչյուր հասարակարգում զբաղեցրել է իր ուրույն տեղը կախված իր՝ տվյալ երկրի հետ ունեցած իրավունքների և պարտականությունների ծավալից: Պետության և անձի փոխարաբերությունների համակարգում կարելի է առանձնացնել անձի՝ որպես հասարակական էակի մի քանի կարգավիճակներ՝ քաղաքացիություն ունեցող անձ, օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձ: Համաշխարհայնացմանը (գլոբալիզացիային) զուգընթաց ի հայտ են գալիս նաև անձի այնպիսի կարգավիճակներ, ինչպիսիք են, օրինակ՝ փախստա-

կանը, ներգաղթյալը, երկքաղաքացիություն (բազմակի քաղաքացիություն) ունեցող անձը: Բավականին շատ օգտագործվում է նաև «Եվրոպայի քաղաքացի» հասկացությունը: Անհրաժեշտություն է առաջանում մանրակրկիտ վերլուծել այս հասկացություններից յուրաքանչյուրը, ներկայացնել դրանց փոխհարաբերակցությունը՝ իրավունքների և պարտականությունների ծավալից ելնելով:

Անձի սահմանադրաիրավական կարգավիճակը ներառում է քաղաքացիության ուժով քաղաքացու պատկանելությունը պետությանը: Այն արտահայտվում է որոշակի իրավուքներով և ազատություններով, ինչպես նաև՝ քաղաքացու պարտականություններով: Ժամանակակից գրականության մեջ նշվում է, որ քաղաքացիության հասկացության տակ պետք է հասկանալ կայուն, երկարատև իրավական կապ անձի և պետության միջև, որն ամփոփում է փոխադարձ իրավունքների և պարտականությունների համալիրը: Այլ կերպ ասած՝ քաղաքացիությունը փոխադարձ իրավուքներ և պարտականություններ է ձևավորում անձի և պետության միջև: Այսպես՝ քաղաքացիության հետ են կապված կարևորագույն իրավական հետևանքները, որոնցից կարելի է առաջնահերթության կարգով ընդգծել օրինակ այն, որ անձը պետության կողմից ճանաչվում է պետաիրավական հարաբերությունների լիարժեք սուբյեկտ[1]: Քաղացիության հասկացության այս ընկալումը, կարծում ենք, ավելի ընդունելի է, քանի որ այն առավել ճշգրիտ է ներկայացնում մարդու և պետության փոխհարաբերությունների ժողովրդավարական բովանդակությունը:

Քաղաքացիությունը՝ որպես կայուն իրավական կապ մարդու և պետության միջև, էական ներգործություն է ունենում վերջինիս զարգացման վրա: Այն անցել է զարգացման երկար ուղի: Ակնարկ կատարելով Հին Հունաստանի և Հին Հռոմի պետությանն ու իրավունքին՝ կարելի է նկատել, որ նրանք անձի իրավունքների և պարտականությունների ծավալում որոշակի տարբերակումներ էին կատարում: Օրինակ՝ Հին Հունաստանում աթենական լիիրավ քաղաքացիներ էին համարվում աթենացիներից ծնված երեխաները, որոնք հանդիսանում էին պոլիսի (հունարեն **πόλις**, որ թարգմանաբար նշանակում է քաղաք-պետություն, աթենական քաղաքացիական հասարակություն) բնակիչներ[2]: Քանի որ պոլիս բառը լատիներեն նշանակում է *civitas*՝ քաղաքացի, ուստի կարելի է եզրակացնել, որ Հին Հունաստանում քաղաքացի և քաղաքացիություն ունեցող անձ հասկացությունները նույնացվում էին, ինչն այսօր ընդունելի չէ: Նմանատիպ մոտեցում է ցուցաբերվում նաև հռոմեական իրավուքնում, որտեղ քաղաքացիություն բառը նույնացվում է քաղաքացի եզրույթի (տերմինի) հետ[3]:

1 Տե՛ս Конституционное право зарубежных стран: Учебник для вузов / Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М. В. Баглая,д. ю. н., проф. Ю. И. Лейбо и д. ю. н., проф. Л. М. Энтина. — М.: Норма, 2004. — էջ 77:
2 Տե՛ս Крашенинникова Н., Жидкова О. История государства и права зарубежных стран: М, 1998. — 480 էջ http://www.gumer.info/bibliotek_Buks/Pravo/istrp/10.php (մուտք է գործվել 08.04.2017թ.):
3 Տե՛ս նույն տեղում. http://www.gumer.info/bibliotek_Buks/Pravo/istrp/11.php (մուտք է գործվել 08.04.2017թ.) :

Ֆեոդալական ժամանակաշրջանում կարևորագույն ինստուտներից էր հպատակությունը, որը նշանակում էր անձնական հավատարմություն միապետին և կախվածություն նրանից: Մեր ժամանակներում «հպատակ» բառը օգտագործվում է որոշ եվրոպական միապետություններում՝ որպես ավանդույթների շարունակում, որը, սակայն, իրավահավասար է «քաղաքացիություն» հասկացությանը: Այնպիսի պետություններ, ինչպիսիք են Իսպանիան, Բելգիան, Նիդեռլանդները, «հպատակություն» բառը և՛ սահմանադրության, և՛ համապատասխան օրենսդրության մեջ փոփոխել են «քաղաքացիություն» հասկացությամբ[1]:

Ֆառլեքսի իրավաբանական բառարանի համաձայն՝ «քաղաքացի է համարվում այն անձը, ով ծննդավայրի, երկու կամ մեկ ծնողի ազգությամբ կամ հպատակության ուժով տվել է հավատարմության երդում տվյալ ազգին»[2]: Նույն տեղում կարելի է հանդիպել նաև քաղաքացիություն տերմինի բացատրությանը, որտեղ ասվում է, որ քաղաքացիությունը այն իրավաբանական կապն է ֆիզիկական անձի և պետության կամ տարածքի միջև, որի արդյունքում այդ անձը ունի որոշակի պաշտպանվածություն, իրավունքներ ու արտոնություններ, ենթակա է որոշակի պարտավորությունների և հավատարմության[3]: Անգլիական և ամերիկյան իրավական համակարգում հաճախ քաղաքացիությունը և ազգությունը օգտագործվում են որպես հոմանիշ բառեր: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում ազգությունը՝ (nationality) հասկացությունը ընկալվում է որպես իրավական կապ անձի և պետության միջև: Համաձայն Մեծ Բրիտանյայի 1983թ. «Քաղաքացիության մասին» օրենքի՝ Մեծ Բրիտանիայի քաղաքացի չեն կարող լինել միայն ծննդյան վայրի ուժով: Անհրաժեշտ է, որ տվյալ երեխայի ծնողը լինի Մեծ Բրիտանիայի քաղաքացի[4]:

XXI դարում քաղաքացիություն ունենալը այն կարևորագույն նախապայմանն է, որի շնորհիվ անձին վերապահվում են տվյալ պետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր իրավունքներն ու ազատությունները, իրականացվում է նրա շահերի պաշտպանությունը ինչպես տվյալ երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Կարելի է եզրակացնել, որ քաղաքացիությունը պետության հետ անձի կայուն իրավական կապն է՝ հիմնված պետության կողմից տվյալ անձին որպես իր քաղաքացի իրավաբանական ճանաչման վրա, որը օրենքով նախատեսված դեպքերում պետության և քաղաքացու համար առաջ է բերում փոխադարձ իրավունքներ, պարտականություններ և պատասխանատվություն: Փորձենք բաղդատել և վերլուծել վերոնշված հասկացության էական տարրերը:

---

1 Տես օրինակ՝ Բելգիայի Սահմանադրություն, հոդվ. 8 http://www.codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/constitutions/eng/eur/bel?fn=document-frameset.htm$f=templates$3.0, Իսպանիայի Սահմանադրություն, հոդվ. 9 http://www.codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/constitutions/eng/eur/esp?fn=document-frameset.htm$f=templates$3.0; (մուտք է գործվել 12.04.2017թ.):

2 Տես իրավաբանական բացատրական բառարան http://legal-dictionary.thefreedictionary.com/citizen (մուտք է գործվել 08.04.2017թ.):

3 Տես նույն տեսում. http://legal-dictionary.thefreedictionary.com/citizenship (մուտք է գործվել 08.04.2017թ.):

4 Տես Collins Dictionary of Law © W.J. Stewart, 2006 http://legal-dictionary.thefreedictionary.com/nationalities (մուտք է գործվել 08.04.2017թ.):

Այսպես՝ քաղաքացիության ինստիտուտը կարելի է բնութագրել հետևյալ էական գծերով.

Պետության և անձի միջև առկա կապի իրավական բնույթով, ըստ որի՝ պետությունը ճանաչում է անձին որպես իր քաղաքացի և համապատասխան օրենքով ամրագրում է այդ կապը: Առանձին երկրներ տարբեր մոտեցումներ են ցուցաբերում վերոնշյալ դրույթի վերաբերյալ: Հիմնական մոտեցումը կայանում է նրանում, որ քաղաքացիության ինստիտուտի սկզբնական և կարևորագույն տարրերը սահմանվում են սահմանադրությամբ, իսկ դրույթների տարածական մեկնաբանությունն արտահայտվում է համապատասխան օրենսդրությամբ: Օրինակ՝ Եգիպտոսի 1971թ. Սահմանադրությունն ամրագրում է, որ «Եգիպտոսի քաղաքացիությունը որոշվում է օրենքով»: Պորտուգալիայի Սահմանադրությունը հայտարարում է, որ «Պորտուգալիայի քաղաքացի համարվում են բոլոր այն անձինք, ովքեր ճանաչված են օրենքով կամ միջազգային համաձայնագրերով»[1]: Իտալիայի Սահմանդրությունը ընդհանրապես չի ընդգրկում «քաղաքացիություն» հասկացությունը, իսկ ֆրանսիական իրավական սովորույթը քաղաքացի եզրույթը նույնականացնում է ազգության հետ[2]: Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը ամրագրում է միացյալ (ընդհանուր) քաղաքացիության սկզբունքը, անկախ այն ձեռք բերելու հիմքերից: Հայաստանի Հանրապետությունը նույնպես և՛ Սահմանադրությամբ (առ 06.12.2015թ. փոփոխություններով, 47-րդ հոդված), և՛ «Քաղաքացիության մասին» (առ 08.02.2017թ. փոփոխություններով, 47-րդ հոդվ.) Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորում է քաղաքացիության հետ կապված բոլոր հարաբերությունները:

Պետության և անձի միջև իրավական կապը արտացոլվում է ոչ միայն Սահմանադրության կամ օրենսդրության մեջ քաղաքացիության ինստիտուտի ամրագրմամբ, այլև դրանցում սահմանվում են քաղաքացիության ձեռքբերման պայմաններն ու կարգը: Միջազգային փորձը և գործող օրենսդրությունները քաղաքացիության մասին նախատեսում են քաղաքացիության ձեռքբերման մի շարք հիմքեր, որոնցից կարելի է առանձնացնել քաղաքացիության ձեռքբերման երկու հիմնական սկզբունք՝ ծննդյան ուժով և նատուրիլիզացիայի (հպատակագրման) միջոցով[3]:

Ծննդյան փաստի ուժով քաղաքացիության ձեռքբերումը հաճախ անվանակոչվում է ֆիլիացիա (անգլերեն filiation լատիներեն filius՝ որդի բառից)[4]: Ծննդյան փաստի ուժով քաղաքացիության ձեռքբերումը կախված չէ անձի կամարտահայտությունից. այն ձեռք է բերվում մեքենայաբար՝ գոր-

1 Տե՛ս Պորտուգալիայի Սահմանադրություն, հոդվ. 4 http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/portugal/portug-r.htm (մուտք է գործվել 09.04.2017թ.):

2 Տե՛ս Конституционное право зарубежных стран: Учебник для вузов / Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М. В. Баглая,д. ю. н., проф. Ю. И. Лейбо и д. ю. н., проф. Л. М. Энтина. — М.: Норма, 2004. — էջեր 436-485:

3 Տե՛ս Арбузкин А.М. Конституционное право зарубежных стран: учеб. пособие. М.: Юристь, 2004. էջ 108:

4 Տե՛ս Collins Dictionary of Sociology, 3rd ed.. S.v. «filiation.» Retrieved April 12 2017 http://encyclopedia2.thefreedictionary.com/filiation (մուտք է գործվել 12.04.2017թ.):

ծող օրենսդրության համաձայն: Ֆիլիացիան իրականացվում է 2 հիմնական սկզբունքների՝ արյան սկզբունքի և հողի սկզբունքի հիման վրա:

«Արյան սկզբունք»-ի իմաստն այն է, որ տվյալ պետության քաղաքացիներից ծնված երեխան, անկախ այն բանից, թե որտեղ, որ երկրում է ծնվել, համարվում է այդ պետության քաղաքացի[1]: Օրինակ՝ Էստոնիայի 1992թ. Սահմանադրությունն ամրագրում է, որ յուրաքանչյուր երեխա, ում ծնողներից մեկը հանդիսանում է Էստոնիայի քաղաքացի, իրավունք ունի ձեռք բերել Էստոնիայի քաղաքացիություն ծննդյան ուժով[2]: Արյան սկզբունքը հատուկ է առավելապես այն պետություններին, որտեղ կենսապայմանները և երկրի ներսում ստեղծված հասարակական-քաղաքական իրավիճակը անբարենպաստ է, որի պատճառով ժողովուրդը զանգվածաբար հեռանում է այդտեղից: Նշված սկզբունքի կիրառման ճանապարհով պետությունը ձգտում է պահպանել իր բնակչության թվաքանակը (Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջան, Ղազախստան և այլն)[3]:

«Հողի սկզբունք»-ը քաղաքացի է ճանաչում բոլոր այն անձանց, ովքեր ծնվել են տվյալ պետության տարածքում, անկախ ծնողների քաղաքացիությունից[4]: Ներկա ժամանակներս պետությունների մեծ մասը այդ հարցում խառը մոտեցում է ցուցաբերում, որի արդյունքում «Արյան սկզբունք»-ը համակցվում է «Հողի սկզբունք»-ի հետ: Նման մոտեցում հիմնականում ամրագրված է անգլո-ամերիկայն իրավական համակարգում[5]:

Քաղաքացիության ձեռքբերումը նատուրիլիզացիայի (հպատակագրման) միջոցով կախված է անձի կամքից, ով փաստացի բնակվում է տվյալ երկրում և խնդրում է իրեն տրամադրել քաղաքացիություն: Նման տեսակի դիմումով հանդես են գալիս այն անձինք, ովքեր փախստականներ են, չունեն որևիցե երկրի քաղաքացիություն, հանդիսանում են ներգաղթյալ կամ ամուսնացել են օտարերկրացու հետ և այլն: Այս տեսակի հարցերը գտնվում են հատուկ մարմինների իրավասության տակ: Օրինակ՝ Բելգիայում նատուրիլիզացիայի միջոցով քաղաքացիության ձեռքբերման հարցը որոշում է խորհրդարանը, իսկ ԱՄՆ-ում՝ դատարանը: Հայաստանի Հանրապետությունում այդ իրավասությունը դրված է ՀՀ նախագահի վրա («Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդվ. 26):

Պետության և անձի միջև իրավական կապը արտացոլվում է նաև այն դեպքում, երբ պետությունն իր իրավունքի համակարգը տարածում է անձի վրա և ստանձնում է նրա նկատմամբ որոշակի պարտականություններ[6]: Ընդ որում, այս իրավիճակում որևէ նշանակություն չունի, թե քաղա-

1 Տես Վ.Այվազյան և ուրիշներ: ՀՀ Սահմանադրական իրավունք. Գիրք առաջին. Երևանի պետական համալսարան.- Եր.: 2016թ. էջ 388 :

2 Տես Էստոնիայի Սահմանադրություն հոդվ. 8 http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/estonia/estoni-r.htm (մուտք է գործվել 12.04.2017թ.) :

3 Տես Վ.Այվազյան և ուրիշներ: ՀՀ Սահմանադրական իրավունք..., էջ 389:

4 Տես Кондратович Н.М. http://www.law.bsu.by/pub/26/Kondratovich_1.pdf (մուտք է գործվել 07.04.2017թ.):

5 Տես Арбузкин А.М. Конституционное право зарубежных стран: учеб. пособие. М.: Юристь, 2004. էջ 108:

6 Տես Վ.Այվազյան և ուրիշներ: ՀՀ Սահմանադրական ռավունք..., էջ 384:

քացին գտնվում է պետության ներսում, թե մշտապես կամ ժամանակավորապես բնակվում է այլ երկրում, որովհետև պետությունը բոլոր դեպքերում պարտավոր է նրան իր պաշտպանության տակ առնել: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի 8-րդ կետը նշում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքի հիման վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո են», իսկ համաձայն «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի՝ «Հանրապետությունից դուրս Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հանրապետությունից դուրս օգտվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունից և հովանավորությունից: Հայաստանի Հանրապետությունը, նրա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները և դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են պաշտպանել այլ պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել նրանց խախտված իրավունքները վերականգնելու համար՝ այդ պետությունների օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան»:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ քաղաքացիության ամրագրումը՝ որպես քաղաքացիության իրավահարաբերությունների ճանաչում, պետության կողմից ամրագրվում է հատուկ ընթացակարգերով:

Քաղաքացիություն ունեցող անձը, անկախ նրանից, թե այն հիմնական, թե ժամանակավոր է ձեռք բերվել, հանդիսանում է հավասար, անկախ ծագումից, ռասայական և ազգային պատկանելությունից, դավանանքից, կրթությունից, լեզվից, քաղաքական և այլ հայացքներից, զբաղմունքի տեսակից և բնակության վայրից: Քաղաքացիության թույլատրելի և ազատ բնույթը արտահայտվում է նրանում, որ 1. յուրաքանչյուր անձ ունի քաղաքացիության իրավունք, անկախ այս կամ այն պայմանից, 2. առկա է քաղաքացիության ձեռքբերման պարզեցված կարգ, 3. քաղաքացին իրավուք ունի փոխել իր քաղաքացիությունը, 4. արգելվում է քաղաքացիությունից զրկելը, 5. այն ուղղված է քաղաքացիություն չունեցող անձանց թվի կրճատմանը:

Քաղաքացիության իրավաբանական ճանաչումը երկրների օրենսդրություններում ընկալվում և արտահայտվում է տարբեր կերպ: Այս հարցում ընդհանուր քաղաքականությունը բնորոշվում է նրանով, որ անձին տրամադրվում է հատուկ փաստաթուղթ, որը և ապացույց է հանդիսանում իր՝ որևիցե երկրի քաղաքացիության պատկանելության վերաբերյալ: Օրինակ՝ ՀՀ-ում այդպիսի փաստաթղթեր են հանդիսանում քաղաքացու անձնագիրը («Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդվ. 4), որը տրվում է 16 տարին լրացած անձանց, իսկ մինչև 16 տարին լրանալը, ծննդյան վկայականը կամ ՀՀ քաղաքացիությունը հաստատող վկայականը:

Միջազգային պրակտիկայում ընդունված է, որ անձնագրում կամ քա-

ղաքացիությունը հավաստող փաստաթղթում հիմնականում նշվում է անձի ազգանունը, անունը, որոշ երկրներում պարտադիր է նաև հայրանվան առկայությունը (օրինակ՝ Իսրայելում, իսկ Կանադայում չափահաս անձի հայրանունը նշվում է միայն նրա ցանկության առկայության դեպքում)[1], սեռը, քաղաքացիությունը, ծննդյան թիվն ու ամսաթիվը, դրա տրման և ուժի մեջ գտնվելու ժամկետը, որ իրավասու մարմինն է այն տվել և այլն՝ կախված երկրի օրենսդրության պահանջներից[2]: Ընդ որում, անձնագրի ժամկետի լրանալը չի նշանակում, որ մեքենայաբար քաղաքացիության կորուստ է արձանագրվում:

Քաղաքացիության ինստիտուտի կարևոր բնորոշ գիծ է նաև **պետության և անձի միջև կապերի կայունությունը**, որն արտահայտվում է այդ հարաբերությունների մշտական բնույթի մեջ:[3] Այդ կապերը, որպես կանոն, սկսվում են անձի ծննդյան պահից և ավարտվում են նրա մահվամբ: Սակայն չպետք է մոռանալ որոշ բացառությունների մասին, ինչպիսիք են օրինակ՝ քաղաքացիությունից հրաժարվելը, կորցնելը, այն փոխելը և այլն:

Ընդհանրացնելով և հստակցնելով շարադրվածը՝ կարելի է նշել, որ քաղաքացիության դադարումը կարող է իրականացվել.

- քաղաքացու կողմից տվյալ երկրի **քաղաքացիությունից հրաժարվելով**: Այն հռչակագրային դրույթ չէ, ուստի անհրաժեշտ է, որ շահագրգիռ անձը դրա մասին գրավոր տեղեկացնի համապատասխան լիազոր մարմնին: Պետք է ընգծել, որ իրավասու մարմինը կարող է մերժել քաղաքացու դիմումը, եթե օրինակ տվյալ քաղաքացին ունի որոշակի պարտավորություններ պետության, ֆիզիկական կամ իրավաբանականան անձանց առջև, եթե այդ անձի նկատմամաբ հարուցվել է քրեական գործ, կամ այդ անձին հայտնի է պետական գաղտնք և այլն, որոնք հստակ պետք է սահմանվեն օրենսդրությամբ,
- **քաղաքացիությունը կորցնելով,** որի տակ անհրաժեշտ է հասկանալ քաղաքացիության դադարում անկախ քաղաքացու կամքից, ինչու չէ՝ նաև նրա կամքին հակառակ: Քաղաքացիության կորուստը հիմնականում տեղի է ունենում այն ժամանակ, երբ քաղաքացու կողմից կատարվում են որոշակի, որպես կանոն արգելված բնույթի գործողություններ, օրինակ՝ առանց իր երկրի թույլտվության օտարերկրյա պետությունում պետական պաշտոն զբաղեցնելը:

Քաղաքացիության կորուստ կարող է լինել նաև այն ժամանակ, երբ անձը ընդունել է այլ պետության քաղաքացիություն, որտեղ չի թույլատրվում երկքաղաքացիություն: Այս առումով հետաքրքրական է Ամերիկայի Միացյալ Նահանգների պրակտիկան: ԱՄՆ Վճռաբեկ դատարանի դատավոր Ջոհն Ռութլեջը նշում էր՝ «Անձը կարող է միևնույն ժամանակ վայելել

1 Տես Конституционное право зарубежных стран: Учебник для вузов / Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М. В. Баглая,д. ю. н., проф. Ю. И. Лейбо и д. ю. н., проф. Л. М. Энтина. — М.: Норма, 2004. — էջեր 78-83:
2 Տես Арбузкин А.М. Конституционное право зарубежных стран: учеб. пособие. М.: Юристь, 2004. էջ 108:
3 Տես Վ.Այվազյան և ուրիշներ: ՀՀ Սահմանադրական իրավունք..., էջ 384:

քաղաքացիության իրավունքը երկու կառավարությունների ներքո»[1], սակայն միևնույն ժամանակ ԱՄՆ-ում նատուրիլիզացիայի միջոցով քաղաքացիության տրամադրումը իրականացվում է երդման միջոցով, որի ընթացքում անձը հրաժարվում է իր նախկին «հայացքներից և համոզմունքներից», որը նատուրիլիզացիայի միջոցով քաղաքացիության ձեռքբերման արարողակարգի կարևոր մաս է[2]: Հատկանշական է, որ բրիտանական քաղաքացիությունից հրաժարվելը պետք է իրականացվի միայն բրիտանական համապատասխան իրավասու անձի կողմից: Այսինքն՝ եթե Մեծ Բրիտանիայի քաղաքացին նատուրիլիզացիայի ուժով դարձել է ԱՄՆ-ի քաղաքացի, ապա նա բրիտանական կառավարության տեսակետից մնում է Մեծ Բրիտանիայի քաղաքացի, անգամ այն դեպքում, երբ անձը ԱՄՆ-ում տալիս է համապատասխան երդում[3]:

Երկքաղաքացիությունը (բազմաքաղաքացիությունը) ավելի լայն կիրառելիություն է գտել 21-րդ դարում, սակայն այն իր մեջ ունի բավականին չլուծված խնդիրներ: Այդ իսկ պատճառով շատ երկրներ դժվարությամբ են կարողանում իրականացնել երկքաղաքացիների նկատմամբ վերահսկողության կառուցակարգերը (մեխանիզմները): Որոշ երկրներ հրաժարվում են այս ինստիտուտից, օրինակ՝ Չինաստանը, Հնդկաստանը, Դանիան օրենսդրորեն ամրագրել են, որ եթե իրենց երկրի քաղաքացին հանդիսանում է միևնույն ժամանակ մեկ այլ երկրի քաղաքացի, ապա նա ինքնաբերաբար կորցնում է իրենց երկրի քաղաքացիությունը:

Կարծում ենք, որ երկքաղաքացիության հետ կապված խնդիրներն ավելի արդյունավետ լուծելու միջոցներից մեկը միջազգային համաձայնագրերի, պայմանագրերի կնքումն է: Բնական է, որ պետությունների կողմից երկքաղաքացիության կրճատման և դրա առաջացման գործում համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկել: Սովորաբար պետությունները բացասաբար են վերաբերվում դիպատրիզմին (անձ, որը միաժամանակ ունի երկու պետության քաղաքացիություն), ձգտում են կնքել երկքաղաքացիության վերացման վերաբերյալ պայմանագրեր՝ պարտավորեցնելով անձին ձեռք բերել պայմանագրի անդամ պետության միայն մեկի քաղաքացիությունը: Այնուամենայնիվ, ժամանակակից պետություններից շատերը հավատարիմ են երկքաղաքացիության ինստիտուտին[4]: Օրինակ՝ Իսպանիայի Սահմանադրության 11-րդ հոդվածն ամրագրում է, որ կարելի է տրամադրել երկքաղաքացիություն Լատինական Ամերիկայի և այն երկրների քաղաքացիներին, ովքեր ունեն կամ կարող են ունենալ հատուկ կապ Իսպանիայի հետ[5]: Պետք է փաստենք, որ երկքաղաքացիների նկատմաբ ավելի հան-

1 Տես Իրավական տեղեկատվական կենտրոն https://www.law.cornell.edu/supremecourt/text/3/133 (մուտք է գործվել 07.04.2017թ.):
2 Տես A Guide to naturalization,USCitizenshipandImmigrationServices.(Responsibilities,page2)., http://encyclopedia.thefreedictionary.com/Multiple+citizenship#cite_note-5 (մուտք է գործվել 12.04.2017թ.):
3 Տես How do I give up British citizenship or another form of British nationality?,UK Border Agency. http://encyclopedia.thefreedictionary.com/Multiple+citizenship#cite_note-5 (մուտք է գործվել 12.04.2017թ.):
4 Տես Конституции государств Европы: в 3-х т. Т.1 под общ. Ред. Л.А. Окунькова. М., 2001 էջեր 472-473:
5 Տես Իսպանիայի Սահմանադրություն, հոդվ. 11 http://www.codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/consti-

դուրժող քաղաքականություն է իրականացվում Լատինական Ամերիկայում: Եվրոպական պետություններից ոմանք նույնպես գտնում են, որ բավականին ընդունելի է երկքաղաքացիությունը՝ կախված անձանց տեղաշարժման և միգրացիոն գործընթացների հետ[1]: Իսպանիայի նման քաղաքականությունը պայմանավորված է նրանով, որ Լատինական Ամերիկայի քաղաքացիների զգալի մասը իսպանական արմատներ ունեն:

XX դարում ավելի հաճախ օգտագործվում է նաև Եվրոպայի քաղաքացի անվանումը, որը որոշ դեպքերում նույնացվում է երկքաղաքացիության հետ:

2005թ. երկքաղաքացիության ինստիտուտը ամրագրվել է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախկին տեքստի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո, իսկ 2008թ. «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նույնպես կատարվել են համապատասխան փոփոխություններ, և սահմանվել է երկքաղաքացիության նոր բնորոշում:

ՀՀ-ն նույնպես օրենսդրորեն ամրագրել և սահմանել է այն հիմքերը, որոնց առկայությամբ անձը դադարում է լինել ՀՀ քաղաքացի: Համաձայն «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ «Հյաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու դեպքում.
2) Կեղծ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում, եթե անձի կողմից կեղծ փաստաթղթեր կամ կեղծ տվյալներ ներկայացնելը հիմնավորվել է օրենքով սահմանված կարգով, և արարքը կատարելու պահից չի անցել 5 տարի.
3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով»:

Վերլուծելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակցնել, որ յուրաքանչյուր պետություն օրենսդրորեն ամրագրում և տրամադրում է համապատասխան երաշխիքներ պետության և քաղաքացու միջև իրավական կապի կայունության ապահովման համար: Եվ այն դրույթը, որ միջազգային նորմերին համապատասխան՝ պետություններին արգելվում է միակողմանի, իրենց հայեցողությամբ, ապօրինաբար դադարեցնել անձի քաղաքացիություն ունենալու իրավունքը, մեր կարծիքով անձի սահմանադրահիրվավական երաշխիքներից մեկն է:

Քաղաքացիության ուժով պետության և անձի միջև **փոխադարձ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության առաջացումը** պայմանավորված է տվյալ երկրի պետական և քաղաքական

tutions/eng/eur/esp?fn=document-frameset.htm$f=templates$3.0 (մուտք է գործվել 08.04.2017թ.):

1 Տես Schcide H. The Draft European Convention on Nationality // Austrian Journal of Public and International Law. 1995. N 1 P. 100:

վարչաձևերով: Ժամանակակից ժողովրդավարական երկրներում քաղաքացիությունը հանդիսանում է անձի իրավական վիճակը բնորոշող գլխավոր ինստիտուտ: Նրանով է պայմանավորված անձի իրավական կարգավիճակի հիմքի հստակ սահմանումը: Պետությունն այդ ինստիտուտի օգնությամբ իրավաբանորեն ճանաչում և հարգում է իր քաղաքացու բնական իրավունքները ողջ ծավալով:

Այսպիսով՝ քաղաքացիության ինստիտուտը որքան հին, այնքան էլ նոր և պարբերաբար կատարելագործվող իրավաբանական կատեգորիա է: Մարդը, որպես հասարակական էակ, միշտ զարգանում է դինամիկ կերպով: Քաղաքացիության ինստիտուտը, պահպանելով իր դինամիկ զարգացումները, ենթարկվելով արտաքին և ներքին խոչընդոտների, փոխում է այդ ինստիտուտին բնորոշ որոշ հատկանիշներ, սակայն պահպանում է մեկ կարևորագույն հատկանիշ, այն է՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի հավասար իրավուքներ և հնարավորություններ՝ անկախ իր՝ այս կամ այն երկրի պատկանելությունից, սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, կա՛մ անձնական, կա՛մ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Հաջորդ կարևորագույն հատկանիշը պետության կողմից քաղաքացիության ինստիտուտի ապահովման համար կայուն, երկարատև հարաբերությունների հաստատումն է՝ չմոռանալով ներգաղթյալներին և քաղաքացիություն չունեցող անձանց ընձեռել քաղաքացիության ձեռքբերման իրավունք: Միջազգային սովորույթային պրակտիկան և օրենսդրությունը ձեռնարկում են համապատասխան միջոցներ յուրաքանչյուր պետությունում անձի իրավուքների, ազատությունների, երաշխիքների պաշտպանության հստակ ամրագրման և իրականացման համար:

КОНЦЕПЦИЯ ГРАЖДАНСТВА И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ (СРАВНИТЕЛЬНО–ПРАВОВОЙ АНАЛИЗ)

Мерри Шахбазян
Преподаватель юридической кафедры
Международного университета Евразия

В данной научной статье был дан сравнительно–правовой анализ понятия «гражданство» и выявлены тенденции его развития. При исследовании автор опиралась не только на соответствующие положения законодательства Республики Армения, но и на законодательства зарубежных стран. В статье также раскрыты принципы приобретения гражданства и содержание понятия двойного гражданства (множественного гражданства).

Ключевые слава: Гражданство, сравнительно–правовое, принцип земли, принцип крови, натурализация, приобретение гражданства, двойное гражданство.

THE CONCEPT OF CITIZENSHIP AND DEVELOPMENT TRENDS (COMPARATIVE LEGAL ANALYSIS)

Merri Shahbazyan
Lecturer of the Law Department at Eurasia International University

The paper touches upon the comparative legal analysis of the concept of citizenship and its trends based on the legal system and the law cods of some of foreign countries, comparing it with the legislation of the Republic of Armenia. The article also discloses the principles of acquiring citizenship and the provision on dual citizenship (multiple citizenship) as well.

Key words: Citizenship, comparatively legal, principle of land, principle of blood, naturalization, acquisition of citizenship, dual citizenship.